

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԸՍՏ ԳԵՏԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ԵՎ ԶՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԸՍՏ ԳԵՏԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ԵՎ ԶՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 19-րդ հոդվածի
և «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի՝
Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել ըստ գետավազանների Հայաստանի Հանրապետության ջրային և ջրատնտեսական հաշվեկշիռների որոշման մեթոդները՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝ երեքամսյա ժամկետում հաստատել «Ըստ գետավազանների Հայաստանի Հանրապետության ջրային և ջրատնտեսական հաշվեկշիռների որոշման» ուղեցույցը:
3. Ըստ գետավազանների Հայաստանի Հանրապետության ջրային և ջրատնտեսական հաշվեկշիռները հաշվարկել Ջրավազանային կառավարման պլաների ժամկետներին համաձայն՝ վեց տարվա կտրվածքով:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հավելված

ԸՍՏ ԳԵՏԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԵՎ ՋՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

1. ՋՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԸ

Ջրային հաշվեկշիռը գետավազանում որոշվում է մթնոլորտային տեղումների, գումարային գոլորշացման, կլիմայական՝ գետի և խորքային, հոսքերի տարրերի հաշվարկի միջոցով: Գետի հոսքը հաշվարկվում է գետերի վրա ջրաչափական դիտակետերի, իսկ գումարային գոլորշացումը և տեղումները՝ գետավազանի օդերևութաբանական կայանների դիտարկված տվյալների հիման վրա: Խորքային հոսքը հաշվարկվում է կլիմայական և գետային հոսքերի տարբերությանը:

Տվյալներ չունեցող գետավազանում ջրային հաշվեկշիռը որոշվում է տեղումների, գումարային գոլորշացման և գետի բնական հոսքի մոդուլի կամ շերտի քարտեզների կազմման հիման վրա:

Ջրային հաշվեկշիռը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$P = Y_{կլ.} + E = Y_{գետ.} \pm Y_{խոր.} + E$$

Որտեղ.

P -ը մթնոլորտային տեղումներն են,

Y_{կլ.}-ը կլիմայական հոսքն է, որը տարանջատվում է գետի բնական և խորքային հոսքերի՝ $Y_{կլ.} = Y_{գետ.} \pm Y_{խոր.}$

Y_{գետ.}- գետի բնական հոսքն է, որը տարանջատվում է մակերևութային և ստորերկրյա հոսքերի՝ $Y_{գետ.} = Y_{մակ.} + Y_{ստ.}$

Գետի բնական հոսքը ($Y_{գետ.}$) որոշվում է երկու մեթոդով.

(1)Ջրաչափական դիտակետերում գետի փաստացի հոսքի բերումը բնականի,

(2)Տեղումներ-հոսք կորի միջոցով՝ կիրառելով հետևյալ բանաձևով.

$Y_{գետ.} = (P - 0,2S) / (P + 0,8S)$, որտեղ **P** -ն տեղումներն են, իսկ **S**-ը հաշվարկվում է $S = 25400 / CN - 254$ բանաձևով (**CN**-ն որոշվում է գետավազանի հողօգտագործման դասի և հողատեսքերի հիման վրա),

Y_{խոր.}- խորքային հոսքն է (խորքային ճանապարհով գետավազան մուտքը կամ ելքը գործող ջրեր),

E-ն գումարային գոլորշացումն է:

Ջրային հաշվեկշռի տարրերի հաշվարկվման միավորն է **մ³**կամ **մմ**:

2. ՋՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԸ

Գետավազանի կամ նրա առանձին հատվածի համար ջրատնտեսական հաշվեկշիռը որոշվում է գետի հոսքի, բնապահպանական թողքի, ջրառի, ջրահեռացման, գետավազանից այլ գետավազան ջրի տեղափոխման, ջրամբարների, լճերի, ձնաբծերի, խոնավ տարածքների, ստորերկրյա ջրերի տարրերի հաշվարկների հիման վրա:

Ջրատնտեսական հաշվեկշիռը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$B = Y_{գետ} - Y_{էկո.} - Y_{ջրառ} \pm Y_{ջրհեռ} + \Delta V \pm T \pm U,$$

որտեղ

B -ն հաշվեկշիռն է՝ ջրապահանջի և ջրառաջարկի տարբերությունը, որ ցույց է տալիս գետավազանի կամ դրա առանձին հատվածների ջրային պաշարների ավելցուկը կամ դեֆիցիտը.

Y_{գետ} -ը՝ տվյալ գետահատվածում գետի բնական հոսքն է,

Y_{էկո.}-ն՝ տվյալ գետահատվածում էկոհամակարգի պահպանման համար անհրաժեշտ բնապահպանական թողքն է,

Y_{ջրառ} -ն՝ գումարային ջրառն է,

Y_{ջրհեռ} -ն՝ գումարային ջրահեռացումն է,

ΔV-ն՝ տվյալ ջրհավաք ավազանի ջրամբարներում և լճերում պահեստավորված ջրի քանակությունն է,

T-ն՝ գետավազանից այլ գետավազան ջրի տեղափոխումն է,

U-ն՝ տվյալ ջրհավաք ավազանում ստորերկրյա ջրերի ծավալը, եթե ստորերկրյա ջրերը նախատեսված են ջրօգտագործման համար (այն չպետք է գերազանցի տվյալ ջրհավաք ավազանի համար սահմանված օգտագործելի ստորերկրյա ջրերի քանակը):

Ջրատնտեսական հաշվեկշռի տարրերի հաշվարկվման միավորն է **մ³**կամ **մմ**:

